

ՀԱՐՑՈՒՄ ՄԱԼԱԹԻՎ-ՍԵՐՎԱՍՏԻՎ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ընտրողների 68%-ը գործող թաղապետ Աղվան ԳՐԻԳՈՐՅԱՆԻ անցած 3 տարիների գործունեությունը գնահատում է լավ կամ ավելի շուտ լավ:
[03.05.2005թ.: Համառոտ հաշվետվություն]

«Ընտրական համակարգերի» Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոնը ապրիլի 28-ից մինչև մայիսի 1-ն անցկացրել է հարցում Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքի թվով 1069 բնակիչների շրջանում:



Հարցումը նվիրված էր հունիսի 5-ին կայանալիք համայնքի ղեկավարի ընտրություններին: Հարցման նպատակն էր գնահատել ընտրություններին համայնքի բնակիչների մասնակցության հնարավոր չափը, մասնակցելու կամ չմասնակցելու մոտիվները, հնարավոր թեկնածուների նկատմամբ ձեւավորված կողմնորոշումները, գործող թաղապետի գործունեության գնահատումն ու ընտրության չափանիշները:

Հարցվողների 45%-ը տեղյակ էր առաջիկա ընտրությունների անցկացման մասին: Ըստ հարցվածների հունիսի 5-ի ընտրությունների քվեարկությանը կմասնակցեն մինչև 25 հազար ընտրողներ:

Ընտրություններին մասնակցողների 50%-ը ընտրություններին մասնակցությունը դիտում է որպես պարտադիր (քաղաքացիական պարտք), 20%-ը մասնակցում է պարզապես սովորության համաձայն, 15%-ը ընտրություններին մասնակցում է հատկապես իր նախընտրած թեկնածուին պաշտպանելու համար եւ այլն:

Ընտրություններին չմասնակցող հարցվածների 14%-ը մասնակցությունն անիմաստ է համարում, քանզի դրանցով ոչինչ չի փոխվում, 3%-ը չեն վստահում ընտրությունների արդյունքներին, 8%-ը քաղաքականությամբ առհասարակ չի հետաքրքրվում, 61%-ը պարզապես չեն ուզում կամ չեն կարող մասնակցել եւ այլն:

Ուշագրավ է այս համայնքում բնակչության կողմից համայնքապետի ընտրության չափանիշները: Ընտրողների 51%-ը թաղապետի թեկնածուին ընտրելիս հիմնականում կողմնորոշվում է թեկնածուի կատարած գործերով ու վաստակով, թեկնածուի անձնական, անհատական որակները առաջնահերթ են ընտրողների 19%-ի համար, կուսակցական պատկանելությամբ կողմնորոշվում են ընդամենը 1%-ը, ծանոթների հորդորով 2%-ը եւ այլն:

Ընտրողների 68%-ը գործող թաղապետ Աղվան ԳՐԻԳՈՐՅԱՆԻ անցած 3 տարիների գործունեությունը գնահատում է լավ կամ ավելի շուտ լավ:

Հարցմամբ ճշտվել են նաեւ հարցման օրերին ընտրողների ձեւավորված կողմնորոշումները: Մասնավորապես, ընտրություններին մասնակցելու պատրաստակամություն հայտնած հարցվածների մոտ 1%-ը պատրաստ է քվեարկել Սամվել Հովսեփյանի օգտին, 28%-ը ծանոթ չէ թեկնածուներին եւ դժվարացել է պատասխանել, մնացած 71%-ը կքվեարկի գործող թաղապետ Աղվան Գրիգորյանի օգտին:

«Ընտրական համակարգեր» կենտրոնի
Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն
e-mail: voxpathuli@expert.am, info@persons.am, info@expert.am
www.persons.am,
www.expert.am